

21
ՀՈՒԼԻՍ
2026

Luys



Lujy®



**ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ»
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԵՎ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2026
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՀՕ-275-Ն ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ և ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի ՀՕ-275-Ն ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Վարդան Պողոսյան
Սահմանադրագետ



I. Ընդհանուր գնահատական

2026 թվականի հուլիսի 3-ին ընդունված, Հանրապետության նախագահի կողմից հուլիսի 8-ին ստորագրված և հուլիսի 9-ին հրապարակված՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-275-Ն օրենքով (այսուհետև՝ Օրենք) կատարված փոփոխությունները պաշտոնապես հիմնավորվում են Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բնականոն և անընդհատ աշխատանքն ապահովելու, ինչպես նաև Սահմանադրական դատարանի՝ 2023 թ. դեկտեմբերի 19-ի ՍԴՈ-1708 որոշման կատարման անհրաժեշտությամբ:

Խորհրդարանի անընդհատ գործունեության ապահովումը, անկասկած, սահմանադրորեն լեգիտիմ նպատակ է: Սակայն խնդիրն այդ նպատակի սահմանադրական ընդունելիությունը չէ, այլ այն, թե արդյոք դրա իրագործման համար ընտրված իրավական միջոցները համապատասխանում են Սահմանադրությանը: Սահմանադրական դատարանի կայուն մոտեցման համաձայն՝ նույնիսկ սահմանադրորեն լեգիտիմ նպատակի իրագործումը չի կարող արդարացնել այնպիսի կարգավորումների ընդունումը, որոնք հանգեցնում են Սահմանադրությամբ նախանշված ինստիտուցիոնալ կառուցվածքի փոփոխության կամ խոչընդոտում են Սահմանադրությամբ պահանջվող արդյունքի ապահովմանը:

Այս գնահատման համար անհրաժեշտ է տարբերակել Օրենքի առանձին դրույթները, քանի որ դրանք սահմանադրաիրավական առումով միատեսակ չեն:

Օրենքի 3-րդ հոդվածով ուժը կորցրած են ճանաչվել Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ և 12-րդ մասերը, որոնց՝ Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասելը (5-րդ մասի պարագայում՝ մասնակիորեն՝ իրավունքը զիջելու հնարավորության մասով) արձանագրվել է ՍԴՈ-1708 որոշման եզրափակիչ մասի 2-րդ և 3-րդ կետերով: Այս մասով Օրենքն ուղղված է Սահմանադրական դատարանի որոշման կատարմանը, և նշված դրույթները սույն կարծիքի առարկա չեն:

Սահմանադրական խնդիրը ծագում է Օրենքի 2-րդ հոդվածից, որով Կանոնակարգի 33-րդ հոդվածը լրացվել է 7.1 և 7.2 մասերով, ինչպես նաև դրա հետ սերտորեն փոխկապակցված Օրենքի 1-ին հոդվածից, որով Կանոնակարգի 14-րդ հոդվածը լրացվել է 2.1 մասով: Նոր կարգավորումները նախատեսում են, որ եթե Ազգային ժողովի նախագահի տեղակալի թափուր պաշտոնում թեկնածու չի առաջադրվում, իսկ մշտական հանձնաժողովի նախագահի դեպքում իրավասու խմբակցությունը չի առաջադրում իրեն վերապահված թափուր պաշտոնում թեկնածու, կամ երկու դեպքում էլ առաջադրված նույն թեկնածուն երեք անգամ չի ընտրվում, ապա համապատասխան պաշտոնի ընտրության հարցի քննարկումը համարվում է ավարտված, իսկ բոլոր համապատասխան հարցերի ավարտից հետո ավարտվում են նաև Ազգային ժողովի առաջին նստաշրջանի ամենօրյա նիստերը: Դրա հետ սերտորեն կապված՝ Օրենքի 1-ին հոդվածով նախատեսվում է հանձնաժողովի արտահերթ նիստ հրավիրելու հատուկ ընթացակարգ այն դեպքերի համար, երբ հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոնները միաժամանակ թափուր են:

Ուշադրության է արժանի նաև Օրենքի 4-րդ հոդվածը, ըստ որի՝ Օրենքն ուժի մեջ է մտնում **Ազգային ժողովի հաջորդ գումարման** առաջին նստաշրջանի բացման օրվանից: Հետևաբար վիճարկվող կարգավորումների գործողությունն ուղղված է ապագա խորհրդարանի ձևավորմանը, ինչը սույն կարծիքի առարկան դարձնում է ոչ թե ընթացիկ քաղաքական իրավիճակի, այլ Ազգային ժողովի կազմավորման ինստիտուցիոնալ մոդելի գնահատումը:

Վիճարկվող կարգավորման իրավական հետևանքի հստակեցումը

Սույն կարծիքի հիմքում դրված է վիճարկվող կարգավորումների իրավական հետևանքի ճշգրիտ նույնականացումը: Անհրաժեշտ է նախ արձանագրել, թե ինչ **չի** անում Օրենքը: Կանոնակարգի 33-րդ հոդվածի 7.1 և 7.2 մասերով ընտրության հարցի քննարկումը համարվում է ավարտված Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, և դրա հետևանքը զուտ օրակարգային է. 7.1 մասի պարագայում քննարկվում է Ազգային ժողովի նախագահի հաջորդ տեղակալի ընտրության հարցը, իսկ բոլոր տեղակալների հարցերի ավարտից հետո՝ օրակարգային հաջորդ հարցը, 7.2 մասի պարագայում՝ հաջորդ մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության հարցը, իսկ բոլոր հանձնաժողովների հարցերի ավարտից հետո ավարտվում են Ազգային ժողովի ամենօրյա նիստերը: Օրենքը չի դադարեցնում իրավասու խմբակցության՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալի կամ մշտական հանձնաժողովի նախագահի թեկնածու առաջադրելու լիազորությունը: Այն ավարտում է միայն այդ հարցի քննարկումն Ազգային ժողովի առաջին նստաշրջանում:

Կանոնակարգի 137-րդ հոդվածի 1-ին մասը (համապատասխանաբար 138-րդ հոդվածի 1-ին մասը) սահմանում է ընտրության երկու ինքնուրույն հիմք՝ առաջին նստաշրջանում, ինչպես նաև պաշտոնը թափուր մնալու դեպքում: 33-րդ հոդվածի 7.1 և 7.2 մասերը սպառում են միայն առաջին հիմքը, մինչդեռ պաշտոնը շարունակում է մնալ թափուր, ինչը հենց Օրենքի տեքստով է հաստատվում. 7.1 և 7.2 մասերն իրենք են այդ պաշտոնն անվանում «թափուր պաշտոն»: Ավելին, Կանոնակարգի 137-րդ հոդվածի 9-րդ մասը (Աժ

նախագահի տեղակալ չընտրվելու դեպքում՝ նոր ընտրություն) և 138-րդ հոդվածի 10-րդ մասը (հանձնաժողովի նախագահ չընտրվելու դեպքում՝ իրավասու խմբակցության կողմից տասնօրյա ժամկետում նոր թեկնածու) ուժը կորցրած չեն ճանաչվել և շարունակում են գործել: Ուստի իրավասու խմբակցությունը պահպանում է թեկնածու առաջադրելու իր լիազորությունը և կարող է այն իրացնել առաջին նստաշրջանից դուրս՝ հերթական նստաշրջանի նիստում: Մշտական հանձնաժողովների մասով դա ուղղակիորեն ամրագրված է Կանոնակարգի 138-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասությամբ, ըստ որի՝ թեկնածուների առաջադրման իրավունքը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը, և այդ դրույթը ՀՕ-275-Ն օրենքով ուժը կորցրած չի ճանաչվել: Ազգային ժողովի նախագահի տեղակալի մասով նման բացահայտ դրույթ Կանոնակարգում առկա չէ, սակայն նույն եզրահանգումը բխում է 137-րդ հոդվածի 1-ին մասի (ընտրություններն անցկացվում են նաև պաշտոնները թափուր մնալու դեպքում) և 9-րդ մասի (տեղակալ չընտրվելու դեպքում անցկացվում է նոր ընտրություն) համակցությունից: Նույն դիրքորոշումն ամրագրված է ՍԴՈ-1708 որոշման 4.4 կետում, ըստ որի իրավասու խմբակցության՝ նշված պաշտոններում թեկնածուներ առաջադրելու լիազորությունը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը:

Ուստի սույն կարծիքի հիմնական եզրակացությունը հետևյալն է. վիճարկվող կարգավորումների սահմանադրական խնդիրը ոչ թե ընդդիմությանը հասանելիք պաշտոնի իրավական վերացումն է, այլ այն, որ դրանք խորհրդարանական մեծամասնությանը հնարավորություն են տալիս սեփական քվեարկությամբ չեզոքացնել Սահմանադրությամբ պահանջվող կազմավորումը: Այդ հետևանքն ունի երկու տարբեր դրսևորում, որոնք թեև տարբերվում են իրենց ծանրությամբ, սակայն բխում են նույն տրամաբանությունից:

Ազգային ժողովի նախագահի տեղակալի մասով (Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մաս) մեծամասնությունը փաստացի ձեռք է բերում վետո՝ ընդդիմադիր խմբակցությունների առաջադրած **կոնկրետ անձի** նկատմամբ¹: Կանոնակարգի 137-րդ հոդվածի 3-րդ մասի ուժով ընդդիմությանը վերապահված Ազգային ժողովի նախագահի տեղակալի թեկնածուն կարող է առաջադրվել բացառապես ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Հետևաբար 33-րդ հոդվածի 7.1 մասով նույն թեկնածուին երեք անգամ մերժելու հնարավորությունը գործնականում նշանակում է, որ ընդդիմությունը կարող է զբաղեցնել իրեն հասանելիք պաշտոնը միայն այն դեպքում, եթե հրաժարվի իր ընտրած անձից և առաջադրի մեծամասնությանն ընդունելի այլ թեկնածու: Ընդդիմության ներկայացվածությունը ձևականորեն պահպանվում է, սակայն այն, թե ո՞ր անձի միջոցով է իրացվում, փաստացի որոշում է մեծամասնությունը:

¹ Սույն կարծիքում «վետո» եզրույթն օգտագործվում է ոչ թե որպես իրավական լիազորության բնութագրում, այլ որպես այն փաստացի ազդեցության նկարագրություն, որի արդյունքում խորհրդարանական մեծամասնությունը կարող է կանխել Սահմանադրությամբ կանխորոշված արդյունքի իրացումը:

Մշտական հանձնաժողովների մասով (Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մաս) հետևանքն էապես ավելի ծանր է: 33-րդ հոդվածի 7.2 մասը գործում է **յուրաքանչյուր** մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության նկատմամբ առանձին: Հետևաբար մեծամասնությունը, կրկնելով նույն վարքագիծն այն բոլոր հանձնաժողովներում, որոնց նախագահի պաշտոնները համամասնության ուժով վերապահված են ընդդիմադիր խմբակցություններին, կարող է հասնել այն արդյունքին, որ ընդդիմությունը չգրադեցնի **որևէ** հանձնաժողովի նախագահի պաշտոն: Այս պայմաններում Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող՝ մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների համամասն բաշխման **ամբողջ սահմանադրական կառուցվածքը կարող է զրոյացվել**. ոչ թե խեղաթուրվել կամ մասնակիորեն շեղվել, այլ ամբողջությամբ չիրացվել: Ընդ որում, Օրենքի 1-ին հոդվածով (Կանոնակարգի 14-րդ հոդվածի 2.1 մաս) պաշտոնի թափուր մնալու պայմաններում համապատասխան հանձնաժողովների փաստացի ղեկավարումն անցնում է հենց մեծամասնությանը, ինչի արդյունքում ընդդիմությանը վերապահված պաշտոնները ոչ միայն մնում են չգրադեցված, այլև յուրացվում են:

Այդպիսով, երկու դեպքում էլ Սահմանադրությամբ պարտադիր պահանջվող ինստիտուցիոնալ արդյունքը վերաժվում է խորհրդարանական մեծամասնության քաղաքական հայեցողությունից կախված հնարավորության, ինչը հակասում է ինչպես Սահմանադրության 104-րդ և 106-րդ հոդվածների բովանդակությանը, այնպես էլ ՍԴՈ-1708 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

II. Սահմանադրության 88-րդ, 89-րդ, 104-րդ և 106-րդ հոդվածների համակարգային մեկնաբանությունը

Վերոգրյալ եզրահանգումն ամրապնդվում է Սահմանադրության համակարգային մեկնաբանությամբ: Այդ դրույթների բովանդակությունը բացահայտվում է միայն Սահմանադրության՝ Ազգային ժողովի սահմանադրական կարգավիճակն ու կազմակերպումը կարգավորող նորմերի ամբողջության համատեքստում:

Սահմանադրության 88-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ Ազգային ժողովը ժողովրդի ներկայացուցչական մարմինն է: Այս դրույթը բնութագրում է ոչ միայն Ազգային ժողովի սահմանադրական կարգավիճակը, այլև կանխորոշում է նրա ներքին կազմակերպության հիմքում ընկած սահմանադրական տրամաբանությունը. ներկայացուցչական մարմնի կառուցվածքը պետք է հնարավորինս արտացոլի ընտրողների կամարտահայտությամբ ձևավորված քաղաքական հարաբերակցությունը:

Այդ սկզբունքի կազմակերպական հիմքը սահմանված է Սահմանադրության 89-րդ հոդվածի 3-րդ մասում, որի համաձայն՝ Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով: Համամասնական ընտրակարգը միայն պատգամավորական մանդատների բաշխման տեխնիկական եղանակ չէ: Այն սահմանադրական ընտրություն է՝ ուղղված խորհրդարանում քաղաքական ուժերի հարաբերակցության հնարավորինս համաչափ արտացոլմանը՝ ընտրողների կամքի համաձայն:

Սահմանադրության 104-րդ և 106-րդ հոդվածները հենց այս սահմանադրական ընտրության բնական շարունակությունն են: Դրանք համամասնական ներկայացվածության սկզբունքը տարածում են ոչ միայն Ազգային ժողովի կազմավորման, այլև նրա ներքին կազմակերպության վրա՝ ապահովելով, որ խորհրդարանի ղեկավար մարմինները ևս արտացոլեն ընտրությունների արդյունքով ձևավորված քաղաքական պատկերը:

Այս համատեքստում Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը, ըստ որի՝ Ազգային ժողովի նախագահի տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից, անշուշտ, անմիջական սահմանադրական երաշխիք է խորհրդարանական փոքրամասնության համար: Սակայն այդ դրույթի նշանակությունը չի սպառվում ընդդիմության ներկայացվածության պաշտպանությամբ: Այն միաժամանակ սահմանում է Ազգային ժողովի ղեկավար կազմի ձևավորման սահմանադրական մոդելի պարտադիր տարր՝ ապահովելով, որ խորհրդարանի ղեկավար կազմը նույնպես արտահայտի նրա բազմակարծիք և ներկայացուցչական բնույթը:

Նույն տրամաբանությունն է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքում: Այդ դրույթը նախատեսում է, որ մշտական հանձնաժողովներում տեղերը և հանձնաժողովների նախագահների պաշտոնները բաշխվում են խմբակցությունների միջև՝ նրանցում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությամբ: Այս պահանջը ոչ միայն երաշխավորում է առանձին խմբակցությունների, այդ թվում՝ ընդդիմադիր խմբակցությունների մասնակցությունը խորհրդարանական մարմինների ղեկավար կազմի ձևավորմանը, այլև սահմանում է Ազգային ժողովի ներքին կազմակերպության պարտադիր կառուցվածքը՝ որպես ժողովրդի կամարտահայտության ինստիտուցիոնալ շարունակություն:

Հետևաբար, Սահմանադրության 104-րդ և 106-րդ հոդվածները չեն կարգավորում միայն առանձին պաշտոնների ընտրության ընթացակարգը: Դրանք սահմանում են Ազգային ժողովի ներքին կազմակերպության այն նվազագույն սահմանադրական կառուցվածքը, որը յուրաքանչյուր գումարման Ազգային ժողովում պետք է ձևավորվի անկախ քաղաքական նպատակահարմարությունից կամ խորհրդարանական մեծամասնության ընթացիկ դիրքորոշումից:

Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1708 որոշմամբ հենց այս համակարգային մեկնաբանությունն է տվել Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին: Դատարանը նշել է, որ այդ դրույթները «ուղղված են Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում խորհրդարանական ուժերի՝ ժողովրդից ստացած քվեին համաչափ ներկայացվածության ապահովմանը, ինչով պայմանավորված է դրանից բխող համամասնությունը պահպանելու հրամայականը» (կետ 4.2): Դատարանը նաև արձանագրել է, որ համամասնությունից ցանկացած շեղում «կձևախեղի ժողովրդի՝ Ազգային ժողովի ընտրությամբ արտահայտված կամահայտնության արդյունքը, Ազգային ժողովի՝ Սահմանադրության

88-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ ժողովրդի ներկայացուցչական մարմնի բնույթը» (կետ 4.2):

Ուստի Սահմանադրության 104-րդ և 106-րդ հոդվածների կատարումը չի կարող գնահատվել միայն առանձին ընտրությունների ձևական անցկացմամբ: Դրանք պահանջում են, որ Ազգային ժողովի սահմանադրորեն կանխորոշված կազմակերպական կառուցվածքը փաստացի ձևավորվի, և որ դրա իրացումը կախվածության մեջ չդրվի խորհրդարանական մեծամասնության քաղաքական հայեցողությունից:

III. Սահմանադրական պահանջի հասցեատերը նաև օրենսդիրն է

Սահմանադրության 104-րդ և 106-րդ հոդվածներից բխող պահանջները չեն սահմանափակվում առանձին խմբակցությունների իրավունքների և պարտականությունների սահմանմամբ: Դրանք նախ և առաջ սահմանում են Ազգային ժողովի կազմակերպման այնպիսի մոդել, որը յուրաքանչյուր գումարման խորհրդարանում պետք է արտացոլի ընտրությունների արդյունքով ձևավորված քաղաքական ներկայացվածությունը: Հետևաբար, այդ դրույթների հասցեատերը միայն համապատասխան թեկնածու առաջադրելու իրավասություն ունեցող խմբակցությունը չէ: Դրանց հասցեատերն է նաև օրենսդիրը, որի սահմանադրական պարտականությունն է մշակել այնպիսի իրավակարգավորում, որը հնարավորություն կտա ձևավորելու Սահմանադրությամբ նախատեսված կազմակերպական կառուցվածքը:

Այս առումով առանձնահատուկ նշանակություն ունի ՍԴՈ-1708 որոշումը: Սահմանադրական դատարանն իրավասու խմբակցության կողմից թեկնածու առաջադրելու իրավասությունը բնութագրել է որպես պարտադիր լիազորություն՝ ընդգծելով, որ դրա իրականացումը չի կարող կախվածության մեջ դրվել հանրային իշխանության որևէ մարմնի բացարձակ հայեցողությունից (կետ 4.2): Այս իրավական դիրքորոշումը վերաբերում է ոչ միայն իրավասու խմբակցության վարքագծին, այլև այն իրավական միջավայրին, որի շրջանակներում այդ լիազորությունը պետք է իրացվի: Եթե իրավասու խմբակցությունը պարտավոր է առաջադրել թեկնածու, ապա օրենսդիրը ևս պարտավոր է նախատեսել այնպիսի ընթացակարգ, որը հնարավորություն կտա այդ լիազորությանը ծառայելու իր սահմանադրական նպատակին: Այս մոտեցումը Սահմանադրական դատարանը ձևակերպել է ընդհանուր բնույթի դրույթով, որն ուղղակիորեն հասցեագրված է օրենսդիրին. «Առհասարակ հարկ է նկատի ունենալ, որ Սահմանադրությամբ ամրագրում ստացած նորմերով սահմանված պարտադիր պահանջների կենսագործումն ապահովող օրենսդրական կառուցակարգերը չեն կարող հիմնվել բացարձակ հայեցողական լիազորությունների վրա՝ անտեսելով այդպիսի լիազորություններով Սահմանադրությամբ նախանշված շրջանակի նկատմամբ հետևանքային ազդեցությունը: Հանրային իշխանության մարմինների լիազորությունները բխում են վերջիններիս սահմանադրական գործառույթներից և ուղղված են դրանց իրականացմանը, հետևաբար հանրային իշխանության մարմինների գործառույթների իրականացման ապահովմանն ուղղված լիազորությունները չեն կարող մեկնաբանվել

այնպես, որ խաթարվեն բուն սահմանադրական գործառույթի էությունն ու դրա կենսագործման նպատակը» (կետ 4.2):

Այս իրավական դիրքորոշումը սույն գործի համար ունի որոշիչ նշանակություն: Այն վերաբերում է ոչ թե առանձին մարմնի վարքագծին, այլ հենց **օրենսդրական կառուցակարգերին**, և արգելում է սահմանադրական պարտադիր պահանջի կենսագործումը հիմնել հայեցողական լիազորության վրա: Մշտական հանձնաժողովների նախագահների և Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնների զբաղեցումն ապահովող ընթացակարգը հենց այդպիսի կառուցակարգ է. այն ուղղված է Սահմանադրության 104-րդ և 106-րդ հոդվածների պարտադիր պահանջների կենսագործմանը: Հետևաբար այդ ընթացակարգը չի կարող կառուցվել այնպես, որ սահմանադրական արդյունքի իրացումը վերջնականապես կախված լինի խորհրդարանական մեծամասնության քվեարկության հայեցողությունից, և չի կարող մեկնաբանվել այնպես, որ խաթարվի բուն սահմանադրական պահանջի էությունը՝ ընդդիմության պարտադիր ներկայացվածությունն Ազգային ժողովի ղեկավար մարմիններում:

Նույն մոտեցումն է Սահմանադրության 75-րդ հոդվածի հիմքում՝ հիմնական իրավունքների կապակցությամբ, և, թեև սույն գործով այն անմիջականորեն կիրառելի չէ, արտացոլում է Սահմանադրության ընդհանուր մոտեցումը, ըստ որի՝ սահմանադրական պահանջի ճանաչումը չի կարող անջատվել դրա արդյունավետ իրացման համար անհրաժեշտ իրավական երաշխիքների ստեղծումից:

Իհարկե, ոչ մի իրավակարգավորում չի կարող կանխորոշել գաղտնի քվեարկության արդյունքը կամ պատգամավորների քաղաքական ընտրությունը: Սակայն սույն Օրենքում խնդիրը վերաբերում է ոչ թե առանձին պատգամավորների կամարտահայտությանը, այլ օրենսդրի կողմից ընտրված իրավական մոդելին: Գաղտնի քվեարկության սկզբունքը կարող է համատեղելի լինել այնպիսի կարգավորման հետ, որը թեկնածուի չընտրվելու դեպքում պահպանում է իրավասու խմբակցության սահմանադրական հավակնությունը և չի ստեղծում այնպիսի մեխանիզմ, որի միջոցով խորհրդարանական մեծամասնությունը կարող է փաստացի կանխել այդ խմբակցության կողմից առաջադրված թեկնածուի ընտրությունը:

Հետևաբար, ընդունված օրենքի սահմանադրաիրավական խնդիրը չի հանգում այն հարցին, թե արդյոք խորհրդարանական մեծամասնությունը պարտավոր էր ընտրել իրավասու խմբակցության առաջադրած թեկնածուին: Խնդիրն այն է, որ օրենսդիրը սահմանել է այնպիսի իրավակարգավորում, որի պայմաններում Սահմանադրությամբ կանխորոշված կազմակերպական կառուցվածքի ձևավորումը կարող է անժամկետ արգելափակվել մեծամասնության քվեարկությամբ, իսկ ընդդիմությանը վերապահված պաշտոնը՝ փաստացի յուրացվել:

IV. «Նույն թեկնածուն երեք անգամ» կանոնը միջամտում է իրավասու խմբակցության սահմանադրական հայեցողությանը

Օրենքով նախատեսված կարգավորման սահմանադրական արատը կայանում է ոչ թե քվեարկությունների առավելագույն թիվը սահմանելու, այլ այն հանգամանքի մեջ, որ այդ սահմանափակումը կապվում է առաջադրված **նույն թեկնածուի** հետ: Դրանով խորհրդարանական մեծամասնությունը ձեռք է բերում վետո՝ իրավասու խմբակցության ընտրած կոնկրետ անձի նկատմամբ, ինչի արդյունքում վերջինիս սահմանադրական լիազորությունը վերածվում է մեծամասնության հավանությանը ենթակա պայմանական իրավունքի:

1. Ի՞նչ է անում և ինչ չի անում վիճարկվող կարգավորումը

Ճշգրիտ գնահատականի համար նախ պետք է նկատի ունենալ, որ Օրենքը, ինչպես արդեն նշվել է, չի վերացնում ընդդիմության կողմից թեկնածու առաջադրելու լիազորությունը: 33-րդ հոդվածի 7.1 և 7.2 մասերով քննարկումն ավարտված է համարվում Ազգային ժողովի առաջին նստաշրջանում, և հետևանքը զուտ օրակարգային է: Պաշտոնը մնում է թափուր, իսկ Կանոնակարգի 137-րդ հոդվածի 1-ին մասը և 138-րդ հոդվածի 1-ին մասը թափուր պաշտոնը դիտարկում են որպես ընտրության ինքնուրույն հիմք: Այդ պաշտոնները լրացնելու ընթացակարգային կառուցակարգերը՝ 137-րդ հոդվածի 9-րդ մասը և 138-րդ հոդվածի 10-րդ մասը, ուժի մեջ են: Հետևաբար իրավասու խմբակցությունը պահպանում է թեկնածու առաջադրելու իր լիազորությունը, իսկ Կանոնակարգի 137-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված տասնօրյա ժամկետը պետք է հաշվարկվի ընտրության հարցի քննարկումն ավարտված համարվելու օրվանից, քանի որ հենց այդ պահից է պաշտոնը թափուր մնում առաջին նստաշրջանի ընթացակարգից դուրս:

Ընդ որում, գործող կարգավորումը հարցի հետագա քննարկումն ընթացակարգային առումով ապահովում է. Կանոնակարգի 137-րդ հոդվածի 6-րդ մասը թեկնածուի ընտրության հարցի քննարկումը հղում է Կանոնակարգի 135-րդ հոդվածին, որի 3-րդ մասի ուժով այդ հարցը ենթակա է պարտադիր քննարկման: Հետևաբար խնդիրն այն չէ, որ ընդդիմադիր խմբակցությունը զրկվում է թեկնածու առաջադրելու կամ հարցի քննարկումն ապահովելու հնարավորությունից: Խնդիրն այն է, որ այդ քննարկումների արդյունքը՝ Սահմանադրությամբ պահանջվող պաշտոնի զբաղեցումը, մնում է ամբողջությամբ պայմանավորված մեծամասնության քվեարկությամբ, և յուրաքանչյուր հաջորդ քննարկում կարող է ավարտվել նույն արդյունքով՝ առանց որևէ իրավական կառուցակարգի, որը կերաշխավորի սահմանադրական արդյունքի, ի վերջո, իրացումը:

Այս արձանագրումը ճշգրտում է Օրենքի հակասահմանադրականության բուն առարկան. խնդիրը պաշտոնի իրավական գոյության մեջ չէ, այլ այն մեխանիզմում, որով մեծամասնությունը ձեռք է բերում որոշիչ ազդեցություն ընդդիմությանը Սահմանադրությամբ վերապահված պաշտոնի փաստացի զբաղեցման վրա:

2. Անձնավորված վետոն և ՍԴՈ-1708 որոշման 4.3 կետը

Կանոնակարգի 33-րդ հոդվածի 7.1 և 7.2 մասերով քվեարկությունների առավելագույն թիվը հաշվարկվում է ոչ թե ընտրության հարցի, այլ **առաջադրված կոնկրետ անձի** նկատմամբ. հարցի քննարկումն ավարտվում է այն դեպքում, երբ առաջադրված **նույն** թեկնածուն երեք անգամ չի ընտրվում: Դրա հետևանքն այն է, որ խմբակցությունը, որը պնդում է իր ընտրած անձի թեկնածությունը, կորցնում է տվյալ նստաշրջանում պաշտոն զբաղեցնելու հնարավորությունը, իսկ այդ հետևանքից խուսափելու միակ ճանապարհը սեփական ընտրությունից հրաժարվելն է՝ հոգուտ մեծամասնությանն ընդունելի այլ անձի: Այսինքն՝ մեծամասնությունը ձեռք է բերում վետո ոչ թե ընդդիմության ներկայացվածության, այլ ընդդիմության **կոնկրետ ընտրության** նկատմամբ:

Ընդդիմության հենց այս հայեցողությունն է, որ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1708 որոշմամբ բացահայտորեն պաշտպանել է: Դատարանը, պարտադիր որակելով թեկնածու առաջադրելու լիազորությունը, հատուկ ընդգծել է, որ «խոսքը վերաբերում է ոչ թե այս կամ այն անձի թեկնածությունն առաջադրելու հայեցողությանը, որը համապատասխան խմբակցության հայեցողական իրավասության տիրույթում լուծվող հարց է, այլ մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի պաշտոններում թեկնածուների առաջադրման լիազորությունն իրացնելուն» (կետ 4.2): Դատարանը նաև հստակ սահմանել է, որ խմբակցության՝ թեկնածուի ընտրության հայեցողությունը «կարող է սահմանափակվել բացառապես մշտական հանձնաժողովի նախագահի և նրա տեղակալի թեկնածուի նկատմամբ ընդհանուր բնույթի սահմանափակումներով» (կետ 4.3):

Վիճարկվող կարգավորումը ներդնում է հենց այնպիսի սահմանափակում, որն ընդհանուր բնույթի չէ: Ընդհանուր բնույթի սահմանափակումներն այն պահանջներն են, որոնց բովանդակությունը սահմանված է նախապես, կիրառվում է բոլոր խմբակցությունների նկատմամբ հավասարապես և ստուգելի է օբյեկտիվ չափանիշներով, ինչպիսիք են պատգամավորի մանդատի առկայությունը, Սահմանադրության 95-րդ հոդվածով նախատեսված անհամատեղելիության պահանջներին համապատասխանությունը, պատգամավորի լիազորությունների կասեցված չլինելը, տվյալ մշտական հանձնաժողովի կազմում ընդգրկված լինելը կամ պաշտոնների համատեղման արգելքից բխող պայմանները: Այդպիսի սահմանափակումների կիրառելիությունը որոշվում է թեկնածուի օբյեկտիվ հատկանիշներով և հայտնի է մինչև առաջադրումը:

Վիճարկվող կարգավորմամբ ներդրված սահմանափակումը բոլորովին այլ բնույթի է: Այն կապված չէ թեկնածուի որևէ օբյեկտիվ հատկանիշի հետ, ի հայտ է գալիս միայն քվեարկության արդյունքով, կիրառվում է ընտրողաբար՝ ըստ մեծամասնության քաղաքական դիրքորոշման, և նույն թեկնածուն կարող է լինել լիովին ընդունելի մի դեպքում և մերժված՝ մյուսում՝ առանց որևէ իրավական չափանիշի: Այդպիսով, ՍԴՈ-1708 որոշմամբ պաշտպանված հայեցողությունը փոխարինվում է մեծամասնության հավանության պահանջով:

3. Պարտադիր լիազորության վերածումը պայմանական իրավունքի

ՍԴՈ-1708 որոշման տրամաբանության համաձայն՝ իրավասու խմբակցության՝ թեկնածու առաջադրելու լիազորությունը պարտադիր է հենց այն պատճառով, որ դրա միջոցով է կենսագործվում Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի իմպերատիվ պահանջը: Վիճարկվող կարգավորման պայմաններում, սակայն, այդ պարտադիր լիազորության իրացումն ինքնին չի ապահովում սահմանադրական արդյունքը. խմբակցությունը կարող է լիարժեքորեն կատարել իր պարտականությունը՝ առաջադրելով թեկնածու, և, միևնույն է, չհասնել այն արդյունքին, որի ապահովման համար է սահմանված այդ լիազորությունը: Այս կերպ պարտադիր լիազորության արդյունավետ իրականացումը կախվածության մեջ է դրվում մեծամասնության կամքից. հենց այն, ինչը ՍԴՈ-1708 որոշման 4.2 կետով բացահայտորեն արգելված է («չի կարող կախված լինել հանրային իշխանության որևէ մարմնի բացարձակ հայեցողությունից»):

4. Հետևանքը Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասի մասով

Այս արատի հետևանքն առավել ցայտուն է Ազգային ժողովի նախագահի տեղակալի ընտրության պարագայում: 33-րդ հոդվածի 7.1 մասի ուժով հնարավոր է իրավիճակ, երբ ընտրվում են երկու՝ մեծամասնությանը պատկանող տեղակալ, ընդդիմության թեկնածուն երեք անգամ մերժվում է, և երեք տեղակալների ընտրության հարցն ամբողջությամբ համարվում է ավարտված: Արդյունքում Ազգային ժողովն իր առաջին նստաշրջանում կազմավորվում է առանց Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասով պահանջվող ընդդիմադիր տեղակալի, և այդ վիճակը կարող է պահպանվել այնքան ժամանակ, որքան մեծամասնությունը շարունակի մերժել իրավասու խմբակցության թեկնածուներին: Խորհրդարանական փոքրամասնության՝ ղեկավար կազմում պարտադիր ներկայացվածությունը վերածվում է մեծամասնության բարյացակամությունից կախված հնարավորության:

5. Հետևանքը Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասի մասով. համամասն կազմավորման գրոյացման հնարավորությունը

Մշտական հանձնաժողովների մասով վիճարկվող կարգավորման հետևանքը որակապես տարբերվում է վերը նկարագրվածից և էապես ավելի ծանր է: Եթե Ազգային ժողովի նախագահի տեղակալի պարագայում խոսքը մեկ պաշտոնի և ընդդիմության ընտրած կոնկրետ անձի մասին է, ապա 33-րդ հոդվածի 7.2 մասը գործում է **յուրաքանչյուր** մշտական հանձնաժողովի նախագահի ընտրության նկատմամբ **առանձին**: Այս հանգամանքը որոշիչ է. կարգավորումը գործում է ոչ թե առանձին պաշտոնի նկատմամբ, այլ դրա ազդեցությունը գումարվում է բոլոր հանձնաժողովների մասով:

Կրկնելով նույն վարքագիծն այն բոլոր հանձնաժողովներում, որոնց նախագահների պաշտոնները Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված համամասնության ուժով ի սկզբանե վերապահված են ընդդիմադիր խմբակցություններին, խորհրդարանական մեծամասնությունը կարող է հասնել այն

արդյունքին, որ ընդդիմությունը չգրադեցնի **որևէ** մշտական հանձնաժողովի նախագահի պաշտոն: Այս դեպքում խոսքն այլևս համամասնությունից շեղման կամ դրա մասնակի խեղաթյուրման մասին չէ. Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասով պահանջվող՝ մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների համամասն բաշխման **ամբողջ սահմանադրական կառուցվածքը կարող է զրոյացվել**՝ մնալով ամբողջությամբ չիրացված:

Այս հետևանքի սահմանադրական անթույլատրելիությունը բխում է հենց ՍԴՈ-1708 որոշման տրամաբանությունից: Դատարանն արձանագրել է, որ համամասնությունից «ցանկացած շեղում կձևախեղի ժողովրդի՝ Ազգային ժողովի ընտրությամբ արտահայտված կամահայտնության արդյունքը» (կետ 4.2), և հենց այդ հիմքով անվավեր ճանաչեց Կանոնակարգի 138-րդ հոդվածի 12-րդ մասը: Հատկանշական է, թե ինչ իրավիճակում էր գործում այդ դրույթը. շեղումն առաջանում էր հենց **իրավասու խմբակցության անգործության** հետևանքով, երբ վերջինս թեկնածու չէր առաջադրում, և միայն այդ դեպքում էր առաջադրման իրավունքն անցնում այլ խմբակցության: Դատարանը, այդուհանդերձ, նման կարգավորումը ճանաչեց Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին հակասող՝ ընդգծելով, որ իրավասու խմբակցությունը չի կարող հրաժարվել իր պարտադիր լիազորությունից, և որ այդ լիազորությունը պահպանվում է մինչև Ազգային ժողովի լիազորությունների ավարտը (կետ 4.4):

Այս համեմատությունը որոշիչ է: Եթե սահմանադրականության պահանջին չի բավարարում այն կարգավորումը, որի պայմաններում համամասնությունից շեղումն առաջանում է հենց ընդդիմադիր խմբակցության **անգործությունից**, ապա առավել ևս չի բավարարում այն կարգավորումը, որի պայմաններում շեղումն առաջանում է, երբ իրավասու խմբակցությունը **լիարժեքորեն կատարել է** իր պարտադիր լիազորությունը՝ առաջադրելով թեկնածու, և շեղումն ամբողջությամբ պայմանավորված է **խորհրդարանական մեծամասնության քվեարկությամբ**: Առաջին դեպքում սահմանադրական արդյունքի չիրացումը գոնե վերագրելի է հենց իրավասու խմբակցությանը: Երկրորդ դեպքում այն ամբողջությամբ վերագրելի է մեծամասնությանը, այսինքն՝ այն սուբյեկտին, որի հայեցողությունից, ըստ ՍԴՈ-1708 որոշման 4.2 կետի, սահմանադրական գործառույթի կենսագործումը չի կարող կախված լինել:

Ընդ որում, 138-րդ հոդվածի 12-րդ մասի պարագայում պաշտոնը, ի վերջո, զբաղեցվում էր՝ թեկուզ համամասնությունը խախտող կարգով: Վիճարկվող կարգավորման պայմաններում համամասն բաշխման կառուցվածքը կարող է չիրացվել ամբողջ ծավալով՝ պաշտոնները թողնելով չզբաղեցված: Համամասնության լիակատար չիրացումը Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասից շեղման ամենաձայրահեղ ձևն է:

Ավելին, այս վիճակը ոչ թե ժամանակավոր է, այլ վերարտադրելի: Կանոնակարգի 138-րդ հոդվածի 10-րդ մասի ուժով իրավասու խմբակցությունը չընտրվելուց հետո տասնօրյա ժամկետում առաջադրում է նոր թեկնածու, սակայն մեծամասնությունը կարող է շարունակել մերժել յուրաքանչյուր հաջորդ առաջադրված թեկնածուին, և Օրենքը որևէ

կառուցակարգ չի նախատեսում, որ երաշխավորի սահմանադրական արդյունքի, ի վերջո, իրացումը:

Վերջապես, պաշտոնի թափուր մնալուց օգտվում է հենց մեծամասնությունը: Օրենքի 1-ին հոդվածով Կանոնակարգի 14-րդ հոդվածին ավելացված 2.1 մասի ուժով, երբ հանձնաժողովի նախագահի և տեղակալի պաշտոնները միաժամանակ թափուր են, հանձնաժողովի արտահերթ նիստը հրավիրվում է անդամների ընդհանուր թվի կեսից ավելիի նախաձեռնությամբ և նախագահվում է հենց նրանց առաջարկած անդամի կողմից՝ տեղակալ ընտրելու կամ նախագահին փոխարինող նշանակելու օրակարգով: Հանձնաժողովներում թվային գերակշռություն ունեցող մեծամասնությունն այդպիսով ձեռք է բերում իր իսկ քվեարկությամբ ստեղծված իրավիճակն օգտագործելու հնարավորություն: Արդյունքում ընդդիմությանը սահմանադրորեն վերապահված պաշտոնները ոչ միայն մնում են չգրադեցված, այլև փաստացի յուրացվում են մեծամասնության կողմից, ինչը ոչ միայն չի ապահովում 106-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը, այլև այն ուղղակիորեն շրջանցում է:

V. Խորհրդարանի աշխատանքի շարունակականության և արդյունավետության նպատակը չի կարող արդարացնել վիճարկվող շեղումը

Ինչպես նշվեց սույն կարծիքի I բաժնում, խորհրդարանի աշխատանքի շարունակականության և արդյունավետության ապահովումը լեգիտիմ սահմանադրական նպատակներ են: Հարցը, հետևաբար, ոչ թե այդ նպատակների լեգիտիմությունն է, այլ այն, թե արդյոք դրանց իրագործումը կարո՞ղ է արդարացնել այնպիսի միջոց, որով սահմանադրական կազմավորումը դրվում է մեծամասնության հայեցողությունից կախվածության մեջ: Ստորև ներկայացված պատճառներով չի կարող:

1. Սահմանադիրն արդեն կատարել է այս հավասարակշռումը

Խորհրդարանի արդյունավետ գործունեության և ղեկավար մարմիններում համամասն ու ընդդիմադիր ներկայացվածության միջև հնարավոր լարվածությունը հավասարակշռելու հարցն արդեն լուծված է հենց Սահմանադրությամբ: Սահմանադիրը, 104-րդ հոդվածի 1-ին մասով և 106-րդ հոդվածի 2-րդ մասով այդ ներկայացվածությունը դարձնելով պարտադիր (իմպերատիվ) պահանջ, կատարել է սահմանադրական մակարդակի արժեքային ընտրություն: Օրենսդիրը, իրականացնելով ածանցյալ, ենթասահմանադրական լիազորություն, իրավասու չէ վերաբացել կամ վերաշարադրել այդ հավասարակշռումը՝ արդյունավետության ենթասահմանադրական շահը վեր դասելով սահմանադրական հրամայական պահանջից:

2. Ընտրված միջոցը պիտանի չէ հայտարարված նպատակին

Վիճարկվող կարգավորումը ներքին հակասության մեջ է իր իսկ հիմնավորման հետ: Խորհրդարանի աշխատանքի արդյունավետությանը ծառայում են պաշտոնները լրացնելը և մարմինների գործունակությունն ապահովելը, ոչ թե դրանք թափուր թողնելը: Մշտական հանձնաժողովը, որի նախագահի պաշտոնը մնում է թափուր, դառնում է ոչ թե ավելի, այլ

պակաս գործունակ. նույն կերպ Ազգային ժողովի ղեկավար կազմը, որ ձևավորվում է առանց ընդդիմադիր տեղակալի, ներկայանում է թերի կառուցվածքով:

Առավել կարևորն այն է, որ «նույն թեկնածուն երեք անգամ» կանոնն ինքնին որևէ կերպ չի նպաստում փակուղու հաղթահարմանը: Այն ընտրության ձախողումը ոչ թե լուծում է, այլ վերարտադրում. քանի որ Կանոնակարգի 137-րդ հոդվածի 9-րդ և 138-րդ հոդվածի 10-րդ մասերով նոր ընտրություն և նոր առաջադրում, այնուամենայնիվ, պահանջվում են, մեծամասնությունը կարող է շարունակել մերժել յուրաքանչյուր հաջորդ առաջադրված թեկնածուին: Հետևաբար կարգավորումն ապահովում է ոչ թե գործընթացի ավարտ, այլ դրա անժամկետ ձգձգման հնարավորություն՝ սահմանադրական պաշտոնը թափուր պահելով անորոշ ժամանակով: Միջոցը, որը չի հանգեցնում հայտարարված նպատակին, չի բավարարում պիտանիության պահանջին:

Չի կարող ընդունվել այն հնարավոր առարկությունը, թե խորհրդարանական մեծամասնությունը վիճարկվող կարգավորումից առաջ ևս կարող էր դեմ քվեարկել իրավասու խմբակցության թեկնածուին, ուստի Օրենքը որևէ նոր հնարավորություն չի ստեղծում: Օրենքն ավելացնում է երեք էական տարր, որոնք բացակայում էին նախկին կարգավորման պայմաններում: **Առաջին՝** այն ընտրության ձախողմանը հաղորդում է ընթացակարգային ավարտի կարգավիճակ. հարցի քննարկումը «համարվում է ավարտված», մինչդեռ նախկինում այն մնում էր բաց՝ որպես չլուծված և լուծման ենթակա հարց: **Երկրորդ՝** 33-րդ հոդվածի 7.2 մասը սահմանում է առաջին նստաշրջանի ամենօրյա նիստերի ավարտի պայման, ինչի հետևանքով հանվում է այն ընթացակարգային ճնշումը, որը կողմերին ստիպում էր փնտրել լուծում և ապահովում էր գործընթացի շարունակականությունը մինչև պաշտոնների լրացումը: **Երրորդ՝** Օրենքի 1-ին հոդվածով ստեղծված իրավիճակը դառնում է մեծամասնության համար շահեկան. հանձնաժողովում թվային գերակշռություն ունեցող մեծամասնությունը ձեռք է բերում պաշտոնի թափուր մնալու պայմաններում այդ իրավիճակից օգտվելու իրավական հնարավորություն:

Այս երեք տարրի համակցությամբ մեծամասնության դեմ քվեարկելու՝ քաղաքականապես միշտ առկա հնարավորությունը վերածվում է իրավական գործիքի, որն ինքնին ապահովում է ընդդիմությանը վերապահված պաշտոնի չգրադեցումը և դրա փաստացի յուրացումը: Հենց այս որակական տարբերությունն է, որ վիճարկվող կարգավորումը դարձնում է սահմանադրորեն խնդրահարույց:

3. Ընտրված միջոցը հակասում է սահմանադրորեն կանխորոշված արդյունքին

Ազգային ժողովի նախագահի տեղակալի պաշտոնի մասով Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասությունը սահմանում է ոչ թե առաջադրման աղբյուրը, այլ ընտրության **արդյունքը**. տեղակալներից մեկն ընտրվում է ընդդիմադիր խմբակցությունների կազմում ընդգրկված պատգամավորների թվից: Այս ձևակերպման պայմաններում խորհրդարանական մեծամասնության՝ ընդդիմադիր տեղակալի ընտրությունը մերժելու հայեցողությունը սահմանադրորեն գրեթե ամբողջությամբ սահմանափակված է. մերժումը կարող է իրավաչափ լինել միայն այնպիսի բացառիկ

դեպքերում, երբ թեկնածուի նկատմամբ առկա են օբյեկտիվ և ընդհանուր բնույթի արգելքներ, որոնք բխում են իրավական չափանիշներից, ոչ թե մեծամասնության քաղաքական գնահատականից: Սահմանադրության 94-րդ հոդվածով ամրագրված ազատ մանդատը չի հակասում այս եզրահանգմանը. այն պաշտպանում է առանձին պատգամավորի քվեարկության ազատությունը, սակայն չի վերապահում օրենսդիրն այնպիսի ընթացակարգ սահմանելու իրավասություն, որը կարող է հանգեցնել 104-րդ հոդվածի 1-ին մասով կանխորոշված սահմանադրական արդյունքի բացակայությանը: Հակառակ մեկնաբանությունը կնշանակեր, որ ազատ մանդատի սկզբունքը կարող է օգտագործվել Սահմանադրության այլ իմպերատիվ պահանջների անտեսումը հիմնավորելու համար, ինչը կխախտեր Սահմանադրության ներքին ներդաշնակության սկզբունքը:

Մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների մասով եզրահանգումն ըստ էության նույնն է: Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասը գործածում է «բաշխվում են» ձևակերպումը, որը, ինչպես 104-րդ հոդվածի 1-ին մասի «ընտրվում է» ձևակերպումը, նշանակում է սահմանադրորեն կանխորոշված **արդյունք**, ոչ թե ընթացակարգ: Սահմանադիրը կանխորոշել է այն վիճակը, որը պետք է առկա լինի Ազգային ժողովում. հանձնաժողովների նախագահների պաշտոնները բաշխված են խմբակցությունների միջև՝ ըստ պատգամավորների թվի համամասնության: Օրենսդիրն ազատ է ընտրելու այդ արդյունքի իրացման միջոցը՝ նշանակման կամ ընտրության կարգը, և Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1708 որոշմամբ ընտրովիությունը ճանաչել է սահմանադրական: Սակայն նույն որոշմամբ ընտրության առնչությամբ Դատարանն ընդգծել է, որ այլ հարց է, որ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովներում, համապատասխան պաշտոնները բաշխելիս, պարտադիր պետք է հաշվի առնվի Ազգային ժողովի խմբակցություններում ընդգրկված պատգամավորների թվի համամասնությունը» (կետ 4.2): Այսինքն՝ ընտրովիությունն իրավաչափ է հենց այնքանով, որքանով այն **ծառայում է** բաշխման սահմանադրական արդյունքին, ոչ թե դառնում է դրա վերացման միջոց:

Հետևաբար, և՛ 104-րդ հոդվածի 1-ին մասի, և՛ 106-րդ հոդվածի 2-րդ մասի պարագայում խորհրդարանական մեծամասնության հայեցողությունը սահմանափակված է միևնույն ծավալով. այն չի ընդգրկում սահմանադրորեն կանխորոշված արդյունքը՝ ընդդիմադիր տեղակալի ընտրությունը կամ պաշտոնների համամասն բաշխումը, մերժելու հնարավորությունը: Վիճարկվող կարգավորումը, սակայն, հենց այդպիսի հնարավորություն է ստեղծում. այն թույլ է տալիս չիրացնել Սահմանադրությամբ պարտադիր դարձած արդյունքը, ինչը ոչ մի ընթացակարգային նպատակահարմարությամբ չի կարող արդարացվել:

4. Ընտրված միջոցը դուրս է գալիս շարունակականության նպատակի սահմաններից (14-րդ հոդվածի 2.1 մաս)

Վիճարկվող կարգավորումը ոչ միայն ավելորդ սահմանափակող է, այլև դուրս է գալիս շարունակականության նպատակի սահմաններից: Օրենքի 1-ին հոդվածով

Կանոնակարգի 14-րդ հոդվածին ավելացված 2.1 մասը, 33-րդ հոդվածի 7.2 մասի հետ համակցությամբ, թույլ է տալիս, որ ընդդիմության թափուր մնացած պաշտոնի պայմաններում հանձնաժողովի արտահերթ նիստը հրավիրվի անդամների ընդհանուր թվի կեսից ավելի նախաձեռնությամբ, նիստը նախագահի հենց մեծամասնության առաջարկած անդամը, և այդ նիստում ընտրվի հանձնաժողովի նախագահի տեղակալ կամ նշանակվի նախագահին փոխարինող: Ընդ որում, օրենսդրի տրամադրության տակ էին Սահմանադրությանը համապատասխանող այլընտրանքային լուծումներ՝ Կանոնակարգի 13-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանությամբ ժամանակավոր փոխարինման կառուցակարգեր, ընտրության վերսկսման հստակ ժամկետների սահմանում, ինչպես նաև քվեարկությունների առավելագույն թիվը ոչ թե առաջադրված անձի, այլ ընտրության հարցի հետ կապելը: Սակայն ընտրվել է հակառակ լուծումը:

Եթե 14-րդ հոդվածի 2.1 մասը կառուցված լիներ որպես ընդդիմության հավակնությունը պահպանող ժամանակավոր կամրջող կառուցակարգ, այն կարող էր լինել իրավաչափ շարունակականության միջոց: Սակայն այն, ինչ նախատեսված է, թույլ է տալիս հանձնաժողովում թվային գերակշռություն ունեցող մեծամասնությանը փաստացի ստանձնել հանձնաժողովի ղեկավարումը՝ ընդդիմությանը վերապահված պաշտոնի հաշվին: Արդյունքում 33-րդ հոդվածի 7.2 մասով ստեղծված արգելափակումը դադարում է չեզոք սպասում լինելուց և վերածվում է պաշտոնի փաստացի յուրացման. մեծամասնությունն օգտվում է հենց իր քվեարկությամբ ստեղծված իրավիճակից: Շարունակականության ապահովման միջոցը վերածվում է սահմանադրական կազմավորումը շրջանցելու միջոցի: Արդյունքում արդյունավետության հիմնավորումը չի համապատասխանում կարգավորման իրավական հետևանքներին:

5. Արդյունավետության հիմնավորումը՝ հասցված իր տրամաբանական հանգրվանին, անընդունելի է

Եթե խորհրդարանի աշխատանքի արդյունավետությունը կարողանար արդարացնել Սահմանադրությամբ երաշխավորված ընդդիմադիր պաշտոնների չգրադեցումը, ապա նույն տրամաբանությամբ այն կարող էր արդարացնել խորհրդարանական փոքրամասնության ցանկացած սահմանադրական երաշխիքի չեզոքացում, որպես «անարդյունավետ» կամ «խոչընդոտող» տարրի վերացում: Այս հետևանքն ինքնին ցույց է տալիս, որ արդյունավետությունը չի կարող ծառայել որպես իմպերատիվ սահմանադրական պահանջից շեղման հիմք:

Այս մոտեցումը համահունչ է Սահմանադրական դատարանի կողմից ՍԴՈ-1708 որոշմամբ վկայակոչված միջազգային չափանիշներին: Ե՛վ Վենետիկի հանձնաժողովը (CDL-AD(2019)015), և՛ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի թիվ 1601 (2008) բանաձևը մշտական հանձնաժողովների նախագահների պաշտոնների՝ ընդդիմությանը համամասնության հիման վրա հասանելիությունը դիտարկում են որպես ընդդիմության իրավունքների ապահովման կարևոր և ինքնուրույն երաշխիք, ոչ թե արդյունավետության նկատառումներով սահմանափակման ենթակա առավելություն:

Ամփոփելով՝ վիճարկվող կարգավորումը հետապնդում է լեգիտիմ նպատակ, սակայն այն իրականացնում է սահմանադրորեն անթույլատրելի միջոցով, որը ո՛չ պիտանի է հայտարարված նպատակին, ո՛չ անհրաժեշտ, ո՛չ էլ համաչափ:

VI. Ձևական վկայակոչումը և ՍԴՈ-1708 որոշման իրավական տրամաբանության անտեսումը

Օրենքի հիմնավորումը բազմիցս հղում է կատարում ՍԴՈ-1708 որոշմանը՝ այն ներկայացնելով որպես վիճարկվող կարգավորումների իրավական հիմք: Սակայն որոշման բովանդակության վերլուծությունը ցույց է տալիս, որ ձևական վկայակոչումը չի նշանակում դրա իրավական տրամաբանության իրական իրականացում:

Ձևական համապատասխանությունն առկա է միայն Օրենքի 3-րդ հոդվածում. այն ուժը կորցրած է ճանաչում Կանոնակարգի 138-րդ հոդվածի 5-րդ և 12-րդ մասերը՝ ուղղված լինելով ՍԴՈ-1708 որոշման կատարմանը: Սակայն դրանով ձևական համապատասխանությունը սպառվում է. հակասահմանադրական բովանդակությունը վերարտադրվում է Օրենքի 2-րդ հոդվածում (33-րդ հոդվածի 7.1 և 7.2 մասեր) և դրա հետ համակցվող 1-ին հոդվածում (14-րդ հոդվածի 2.1 մաս):

Հատկանշական է, թե ինչպես է վերարտադրվում ՍԴՈ-1708-ով քննադատված արատը: Դատարանը 138-րդ հոդվածի 12-րդ մասն անվավեր ճանաչեց, որովհետև իրավասու խմբակցության փոխարեն այլ խմբակցությանը թեկնածու առաջադրելու իրավունք տալը խախտում է համամասն բաշխման սկզբունքը (կետ 4.4): Նոր կարգավորումը խուսափում է «այլ խմբակցությանը փոխանցելու» ձևից, սակայն հասնում է նույն սահմանադրական արդյունքին՝ այլ միջոցով. այն մեծամասնությանը հնարավորություն է տալիս անժամկետ արգելափակել իրավասու խմբակցության թեկնածուներին և, Օրենքի 1-ին հոդվածով, փաստացի ստանձնել համապատասխան պաշտոնի գործառույթները: Երկու դեպքում էլ Սահմանադրությամբ պահանջվող համամասն կազմավորումը դրվում է խորհրդարանական մեծամասնության կամքից կախվածության մեջ, ինչը հենց ՍԴՈ-1708 որոշման արգելած արդյունքն է:

Առավել ուղղակի է հակասությունը ՍԴՈ-1708 որոշման 4.3 կետի հետ, որով Դատարանը թեկնածուի ընտրության հայեցողությունը վերապահել է իրավասու խմբակցությանը՝ թույլատրելով դրա սահմանափակումը բացառապես ընդհանուր բնույթի պահանջներով: Օրենքի 2-րդ հոդվածով ներդրված՝ նույն թեկնածուի կրկնվող առաջադրման նկատմամբ սահմանված թվային սահմանափակումը հենց այդ հայեցողությանն է միջամտում՝ դարձնելով այն մեծամասնության քվեարկությունից կախված: Դատարանը որևէ տեղ չի ամրագրել, որ մեծամասնությունը կարող է իր քվեարկությամբ վետո դնել իրավասու խմբակցության ընտրած անձի վրա:

Ի վերջո, Օրենքը ներքին հակասության մեջ է ինքն իր հետ: 33-րդ հոդվածի 7.2 մասը խմբակցության առաջադրումը որակում է որպես «իրեն վերապահված» պաշտոնում իրացվող լիազորություն՝ ՍԴՈ-1708 որոշման տրամաբանությամբ, ապա դրան կցում

այնպիսի հետևանք, որը թուլացնում է հենց այն սահմանադրական արդյունքը, որի ապահովման համար է սահմանված այդ լիազորությունը: Հետևաբար նոր կարգավորումը ոչ թե իրականացնում է ՍԴՈ-1708 որոշումը, այլ այն օգտագործում է որպես հիմնավորում բոլորովին այլ իրավական լուծման համար:

VII. Եզրակացություն

Ընդունված փոփոխությունների ամենախնդրահարույց տարրը ոչ թե խորհրդարանի աշխատանքի շարունակականությունն ապահովելու լեգիտիմ նպատակն է, այլ այն միջոցը, որով այդ նպատակն իրականացվում է. Օրենքը խորհրդարանական մեծամասնությանը հնարավորություն է տալիս սեփական քվեարկությամբ արգելափակել իրավասու խմբակցության ընտրած թեկնածուի ընտրությունը, երկար ժամանակ պահպանել Սահմանադրությամբ պահանջվող կազմավորման բացակայությունը և այդ ընթացքում փաստացի յուրացնել ընդդիմությանը վերապահված պաշտոնը: Վերոգրյալից բխում են հետևյալ եզրակացությունները.

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 33-րդ հոդվածի 7.1 և 7.2 մասերն այնքանով, որքանով ընտրության հարցի քննարկման ավարտը կապում են առաջադրված նույն թեկնածուի երեք անգամ չընտրվելու հետ և դրանով խորհրդարանական մեծամասնությանն ընձեռում են վետո՝ իրավասու խմբակցության ընտրած կոնկրետ թեկնածուի նկատմամբ, հակասում են Սահմանադրության 104-րդ հոդվածի 1-ին մասին և 106-րդ հոդվածի 2-րդ մասին՝ մեկնաբանված 88-րդ և 89-րդ հոդվածների համատեքստում, ինչպես նաև անհամատեղելի են ՍԴՈ-1708 որոշման 4.2 և 4.3 կետերով արտահայտված իրավական դիրքորոշումների հետ, քանի որ իրավասու խմբակցության պարտադիր լիազորությունը վերածում են մեծամասնության հավանությանը ենթակա պայմանական իրավունքի:
2. Օրենքի 1-ին հոդվածով Կանոնակարգի 14-րդ հոդվածին ավելացված 2.1 մասն այնքանով, որքանով 33-րդ հոդվածի 7.2 մասի հետ համակցությամբ հանձնաժողովում թվային գերակշռություն ունեցող մեծամասնությանը թույլ է տալիս իր իսկ քվեարկությամբ ստեղծված պաշտոնի թափուր վիճակում ստանձնել մշտական հանձնաժողովի փաստացի ղեկավարումը, հակասում է Սահմանադրության 106-րդ հոդվածի 2-րդ մասին, քանի որ ընդդիմությանը համամասնության ուժով վերապահված պաշտոնը փաստացի դուրս է բերում սահմանադրորեն նախատեսված բաշխման համակարգից:
3. Օրենքի 3-րդ հոդվածն ուղղված է ՍԴՈ-1708 որոշման կատարմանը և սույն կարծիքի առարկա չէ:

Ամփոփելով՝ վիճարկվող կարգավորումը Սահմանադրությամբ երաշխավորված կազմավորումը վերածում է խորհրդարանական մեծամասնության քաղաքական կամքից կախված հնարավորության, ինչն անհամատեղելի է խորհրդարանական փոքրամասնության սահմանադրական կարգավիճակի, Սահմանադրության 104-րդ և

106-րդ հոդվածների իմպերատիվ բնույթի և Հայաստանի Հանրապետության Սահմանադրության գերակայության սկզբունքի հետ:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը **«ԼՈՒՅՍ»** հիմնադրամն է:

Նյութի ամբողջական կամ դրանից քաղվածքների վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն **«ԼՈՒՅՍ հիմնադրամ»** գրառման և համապատասխան **ակտիվ հղման** տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը: